

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисть, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

Այսօր, կիրակի, մայիսի 20-ին

ՄԱՐԹԱ ԹՈՎՄԱՍԵԱՆ ԶԵԼԻԳՈՎԱՅԻ

մահվան կիսամեակի օրը, Թանգոյան ս. Աստուածածին եկեղեցում լինելու է պատարագ եւ ՀՈԳԵՆԱՆԳԻՍՏ, որի մասին յայտնում են Մարիամ Թովմասեան Լուսկեպիչ եւ Նատալիա Թովմասեան Միխայլովա քոյրերը իրանց ազգականներին եւ ծանօթներին: Պատարագի սկիզբն է 11, իսկ հոգեհանգստինը 12 ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակիօրեայ գրոյց. Դատաստանական դահլիճից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒԴԻՐ. Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Մի օրինակ էլ մեր հայկական մուրացկանութիւնից:

Մի քանի տարի առաջ վախճանվեց ուսուցիչ Վարդան Արովան: Ո՞վ էր Վարդան Արովան: Նրան ճանաչում են միայն նրա աշակերտները, իսկ ո՞վ է իրաւաւոր Արովան: Սրան ճանաչում է իւրաքանչիւր հայ: Վէճք Հայաստանի գրողը Այս երկու խօսքն էլ բաւական են:

Վարդան Արովանը իրաւաւոր Արովանի որդին էր: Մեծու նա, Թոգեկով մեծ ընտանիք, երեխաներ: Եւ ապրումներ ոչ մի միջոց: Այն որտեղ է, որ այդքան հոգեկամ պապի թոռները իրաւունք ունեն հասարակութեան ամենալինք համակրութիւնը եւ ուշադրութիւնը գրական, հասարակաց գործունեքը: Կայեղելու:—Ամեն տեղ, բայց ոչ հայերի մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Ջ Ա Տ Ժ Ա Մ Ե Ր

Դարձեալ բարեգործական մասին

Բարեգործութիւնը, սովորաբար, երեք տեսակ է լինում:

Առաջինը՝ երբ մարդ կենդանի, մտքով եւ մարմնով առողջ ժամանակ, նուիրում է մի գումար որ եւ է ազգային, թէ հասարակական հիմնարկութեան: Այդ գումարը նա գործադրում է իր ձեռքով, իր կամքով յայտնի նպատակի համար եւ իր աչքերով տեսնում է իր բարեգործութեան պտուղներն ու արդիւնքը:

Երկրորդը՝ երբ մարդ, զարձակ կենդանութեան ժամանակ, նուիրաբերում է մի գումար կտակի միջոցով: Գալիս է մահը եւ կտակակատարները, առանց, ի հարկէ, բարեբարի ներկայութեան եւ մասնակցութեան, գործադրում են կտակած գումարը հանգուցեալի կամքի եւ կարգադրութեան համաձայն:

Եւ երրորդը՝ երբ մարդ մեռնում է շատ անգամ անգուակ, եւ իրանից յետոյ թողնում է հարստութիւն: Այն ժամանակ ազգականները, հայր է թէ մայր, կին է թէ եղբայրներ, ցանկանալով յարգել տալ կամ անմոռաց պահել հանգուցեալի յիշատակը, նուիրում են մի յայտնի գումար, իրեն հոգու բաժին, որ եւ է նպատակի համար:

Այդ երեք տեսակ բարեգործութիւնների մէջ կայ, սակայն, տարբերութիւն եւ, ինչպէս կը տեսնէք, մեծ տարբերութիւն:

Դառն քրտինքով վստասկած գոյքը կամ փողը առհասարակ շատ քաղցր է լինում մարդու համար եւ սիրելի՝ սեփական անձին ոչ պակաս: Եւ երբ մարդ, մեր նիւթապաշտ դարում, իր կենդանութեան ժամանակ իր գոյքից բաժին է հանում իր ընկերին, դա պարզ ապացոյց է, որ նուէրը նա անում է ինքնաբերական:

Մեզանում իրաւաւոր Արովանը տեղ չը գտաւ եւ ստիպւած էր պետական ծառայութեան մէջ ապրուստի միջոց որոնել: Մեզանում նրա որդին երկար ժամանակ ուսուցչութիւն անելուց յետոյ էլ չը կարողացաւ իր զաւակների ապագան ապահովելու իրաւունքը ձեռք բերել: Մեզանում էլ նրա թոռները պիտի ձեռք մեկնեն բարեբարներին, որպէս զի ապրեն, ուսում առնեն:

Ինչպէս առաջացաւ հոգեկամ պապի աւագնական թոռների այս դրութիւնը:

Վարդան Արովանը ուսուցիչ էր էլ միայն: Եւ ինչպէս իրաւունքը ձեռք բերեալ: Այդ իրաւունքը ունէր Վարդան Արովանը, եթէ նա իրաւաւոր Արովանի որդին էլ չը լինէր, այլ մի հասարակ մահկանացուի որդի, որ աշխատել է, ոյժ ու կարողութիւն չէ խնայել իր պաշտօնում: Բայց էլ միայն մուրացկանութեան բարձրագոյն դուռն է: Այնտեղ կարելի է օրինաւոր եւ ապօրէն կերպով ուսել, բայց մի բան ստանալ իրեն առաջ իրաւունք անհարկն է: Վարդան Արովանը ուսողներից չէ եղել. դա նրա համար փառք է, իսկ նրա ընտանիքի համար—աղքատութիւն եւ կարոտութիւն:

Բայց էլ միայն իր կամքով մի բան անել. նա թօշակ նշանակեց, նշանակելը հեշտ է, բայց կատարելն է: Ելմիածնի սնդուկը, որի մէջ

բարձր գումար բարեգործական եւ մարդկային պարտաճանաչութեան զգացմունքներից շարժված: Այդպիսի բարեգործ մարդը միշտ գոհ է արտով եւ երբեք չէ զղում իր արածից, եթէ միշտ եւ անգամ ապագայում, անակնկալ եւ ձախողական հանգամանքների չնորհիւ, նա ստիպւած լինէր ապրել չքաւորութեան մէջ: Նա միմիջարկում է իրանից բարեբարութեան ընտրութիւնը եւ երջանկութիւնը տեսնելով:

Ուրիշ է, երբ մարդ ճիշտապէս է բարեգործութիւն անում, կտակելով իր գոյքը կամ արա մի մասը, որ ձեռքից չէ տալիս եւ որից չէ կամենում բաժանվել միշտ: Իր վերջին շունչը, միշտ գերեզմանի դուռը: Մահից յետոյ է միայն կարելի դառնում ձեռնամուկ լինել հանգուցեալի համար այլ եւս արդէն անպէտքացած գոյքին կամ փողին: Ժիշտ է, կտակի գործութեամբ նրա նուիրատուութիւնը տեղ է հասնում, ծառայում է իր նշանակութեանը, բայց նրա սիրտը եւ հոգին անձեռնհաս են լինում այն միմիջարկութեան եւ հրճուանքին, որպիսին վայելում են կենդանի բարեգործները ընդհանրապէս: Այս տեսակ բարեգործութիւնը յիշեցնում է մի կտոր հաց, որի տէրը այլ եւս ուստի չէ կարողանում, կամ անգույշ մահը ժամանակ չէ տալիս ուսելու եւ նա կամայականաւ թողնում է այդ կտոր հացը ուրիշ կենդանի-քաղցածներին:

Սակայն ինչո՞ւ լինել կամ համարվել պետութիւն: Ինչո՞ւ բարեգործութեան վրա անգամ ծուռ աչքով նայել: Զ՞որ Աստուած ստեղծել է անշուշտ եւ այնպիսի անհասկանալի, որոնք չեն կամենալ իրանց բարի գործերի փոխարէն անձամբ ստանալ չնորհալարութիւններ եւ երախտագիտական ցոյցեր: Սրանցից ինչպէս խոյս տալու նպատակով նրանք կարող էին թագուն պահել իրանց նուիրատուութիւնները, որոնք, մահը վրա հասնելուց յետոյ արդէն, լոյս աշխարհ կը գային աւելի մեծ շուքով եւ կընդունվէին, հետեւապէս, աւելի մեծ երախտագիտութեամբ:

հարկւոր աշխարհական ու հոգեւոր մկնիւր են վազվզում, չը փորձեց էլ յանձն առնել տալու պարտաւորութիւն. նա միմիջարկ անելով է: Ապա ինչ անել: Ելմիածնի իրաւասութեան տակ գտնվող հայկական լայնարձակ աշխարհում միայն մի հատ փողք ի շատէ ապահով հիմնարկութիւն կայ—Ներսիսեան դպրոցը: Ի՞նչ հրաշքով է այդ հիմնարկութիւնը այդպէս ապահով մնացել, ինչպէս է որ միակ նա է, որ մուրացկանութիւն չէ անում,—դա այլ հարց է, այլ պատմութիւն: Բայց եթէ պարզը խոստովանենք, Ներսիսեան դպրոցն էլ, եթէ սկսէ հոգ տանել իր հարկեր ու մի կիսատպուտ բաների, իր ծակ ու ծուկերը լցնելու, իր ցաւերը բուժելու մասին, նա էլ կը դառնայ մեր սովորական հիմնարկութիւններից մէկը, այսինքն ոչ-հարուստ: Այժմ հարուստ է, որովհետեւ աղքատ է ապրում:

Եւ ահա աղքատութեամբ հարուստ երեւացող այդ հիմնարկութեան զանաւորներն է, որի միջոցով էլ միմիջարկ կամենում է իր պարտաճանաչութիւնը ցոյց տալ: Նա կարգադրում է, որ Վարդան Արովանի ժառանգներին դպրոցը թօշակ տայ, կարծես մտերեւան 600 ռուբլի: Դպրոցի հոգաբարձութիւնը ընդունում է այդ առաջարկութիւնը այն պայմանով, որ թօշակը տրվի ուսումնականների արդիւնքից: Այնքան է ժամանակ: Ելմիածնական սնդուկում վստացող մկնիւրը կերակուր են պահանջում: Ի՞նչ անել: Մուրացկանութիւնը այլ եւս բան չէ տեսնում: Պէտք է աղբիւրների գտնել: Դարաբաղի վանքական կալուածները վաղուց են քաղցած մկնիւրի տրամադրութեան տակ զերված եւ գրոչներ են տալիս, որովհետեւ ուսողները մէկը չեն, տասը չեն: Լուռ են, որ Թիֆլիսի ուսումնականները բաւական խոշոր արդիւնքներ են տալիս: Ներսիսեան դպրոցին: Հաղարներ... Եւ թօշուկ է հրաման. իսկ այդ ուսումնականները, յանձնել կօնսուստօրային, ի նկատի ունենալով, ի հարկէ, ժամանակի խորհրդաւոր հանգամանքները:

Ժիշտ է, Աստուած նմուշի համար տուած պիտի լինի աշխարհին այգօրինակ առաքինի տիպարներ: Բայց մեր ներկայ փառասէր դարում մի ամբողջ միլիոն մարդկանց մէջ հազիւ թէ կարելի լինէր գտնել այդ իրեն նմուշ ծառայող անհատներից մի հատ:

Գալով երրորդ տեսակի բարեգործութեան, ցաւ ի սիրտ պիտի խոստովանենք, որ նա, թէ եւ անվում է մեռած մարդու անունով կամ նրա յիշատակին, բայց եւ այնպէս նա ամբողջովին վերաբերում է բարեգործութեան նախաձեռնողներին, որոնք եւ անպայման պատկանում են առաջ եկած՝ պատիւն ու փառքը: Հանգուցեալի անունը այստեղ յիշվում է միայն թէ ցոյց մարդկանց: Հանգուցեալը, թէ պէտք եւ բարի մարդ ու առաքինի քրիստոնեայ, ոչ մի դեր եւ ոչ անհատականութիւն չունի կատարված բարեգործութեան մէջ, որ էլ բարձրանալով դառնանականներով փառաբանենք նրա անունը, որքան էլ բազմաժանր եւ շքեղ կատարենք նրա յուշարկաւորութիւնը եւ թաղումը, որքան էլ, վերջապէս, ծուռ ու առատ սեղանով շրջապատենք նրա չիրմիք:

Մեզ կարող են առարկել, թէ բարեգործական նուիրատուութիւնները յաճախ կաղմում են մեռած մարդու վստակը, ուստի եւ նրան միայն պիտի տրա մեր չնորհալարական հարկը: Ժիշտ է, որքան դժ ոչինչ չունենալ:

Միայն մի հարց—յօժար կը լինէր արդե՞ք հանգուցեալը, եթէ մի հրաշքով աչքերը բացար ու տեսնէր: Թէ ինչպէս նրա եղբայրը կամ կինը ցրվում են աշ ու ձախ նրա ճակատի քրտինքով վստակած փողերը, թէպէտեւ այս կամ այն բարեգործական նպատակների համար:

Հագիւ թէ:

Որովհետեւ այդ բանը նա չը կամեցաւ անել իր ամբողջ 60—70-ամեայ կեանքում. որովհետեւ երկար ամիսներով անկողնի մէջ տառապելիս, մինչեւ անգամ Գաբրիէլ հրեշտակի

Եւ խլվում են ուսումնականները: Կօնսուստօրային չաղ եկամուտների հետ անցնում է եւ իրաւաւոր Արովանի թոռներին մի քանի հարիւր ռուբլի տալու պարտաւորութիւնը: Հաղարների դիմաց մի քանի հարիւր ռուբլի: Դուք արդէն տեսնում էք, որ դա հեշտ, շատ հեշտ բան է:

Սխալվում էք: Որքանի այդին դիմումներն է անում, բայց լուռ է մի եւ նոյն անվորով, սրբազան վեհաթեմա արտասանվող պատասխանը. «Ոչ կարեմք»: Մնացածը աւելի քան հասկանալի է... Այդին պիտի դռներն ընկնէ. հօ նա չէ կարող քարայնել իր մայրական սիրտը:

Թիֆլիսի ուսումնականները մի ժամանակ օգնում էին իրաւաւոր Արովանի թոռներին: Իսկ այժմ չեն օգնում: Պատճառը:

Պատճառը արդաւոր ու սոյս է: Սրբաթեմաները ուսումնական եւ ուսողները կշտանալու կարողութիւնից զրկված են: Այդ ուսողներին չէ կարելի արգելել, ոչ ոք իրաւունք չունի նոյն իսկ անել. «Ուսումնական էք, քիչ կերէք»: Իսկ որքանը, նրանք ուսողներից չեն, ուրեմն նրանք պարտաւոր են մուրացկանութիւն անել: Աստուած ողորմի նրանց հոգեկամ պապի բերեղի պէս մաքուր հոգեւոր: Մի ժամանակ հայերը նրա համար արձան էլ էին ուղում դնել, փողեր էլ հաւաքելիս, բայց...

Միթէ այդ «բայցը» չէ կարող գոյութիւն ունենալ եւ Հայաստանեայց եկեղեցու ֆինանսական գործողութիւնների մէջ...

Խեղճ իրաւաւոր Արովան... «Իմ ազիզ ազգ» էիր բացականչում դու քո ծով սրտի խորքից:

Այսօր այդ ազգը շատ լաւ ցոյց է տալիս, որ «ազիզ» չէ, որ նա արժանի էլ չէր քո կրակոտ սէրին: Հարցրե՛ք մուրացկան թոռներին...

Լ.

այցելութեան ժամանակ, նա մի օրով չը մոտենց իր հարստութիւնից անջատվել կամ նրանից մի բաժին հանել չքաւորներին, կարօտեալներին կամ որ եւ է բարեգործական հիմնարկութեան:

Դուրս է գալիս ուրեմն, որ վերեւ յիշած առաջին տեսակի բարեգործութիւնը միշտ գերադասելի է միւս ըստի տեսակներից: Ուստի եւ ցանկալի է, որ կենդանի բարեգործների թիւը աճէ մեր մէջ եւ բազմանայ օր օրի վրա: Մի խօսք էլ նուիրատուութիւնների անելու սխառնի մասին:

Մեր մէջ գրեթէ ընդհանրացած սովորութիւն է զրամական նուէրը բաժանել զանազան մասերի, մանրացնել եւ յատկացնել դաւանազան նպատակների:

Մեր իրաւունքից դուրս է, ի հարկէ, ուղեցոյց հանդիսանալ կենդանի մարդու, կտակ կաղմողի եւ այլն, վերջապէս, արդէն հանգուցեալ անձնաւորութեան ազգականների համար:

Մենք անկեղծ եւ անխտիր յարգում ենք իւրաքանչիւր բարեբարի կամքն ու ուստի Միայն աւելորդ չենք համարում չեղտել այն հանգամանքի վրա, որ անհամեմատ աւելի լաւ է նուիրաբերած գումարը ուղղել եւ յատկացնել մի, այն, միայն մի նպատակի համար:

Նախապատիւ էք համարում դպրոցը, թէ եկեղեցին, հիւանդանոցը, թէ վանքերը, հասարակական որ եւ է անհրաժեշտ ու անյետաձգելի կարիք, թէ աղքատանոց եւ այլն: —այդ ձեր հասկանալու բանն է, այդ ձեր գործն է: Տուէք որքան կամենում էք, որ չափով ներում են ձեր միջոցները, մինչեւ որ սահմանը թելադրում է ձեր սիրտը, միայն թէ անխորհուրդ մի կտոր-կտոր արե՛ք ձեր գործը. տուէ՛ք ձեր նուէրը մի նպատակի համար, եւ նա կը լինի արդիւնաւոր, եւ նա կը բերէ անհամեմատ աւելի պտուղներ:

Սերմայան

(467)

—Uyumi:

խնդրում է, որ վարձատրության գումարի վճարումը կատարվի ոչ թե երեսուն տարվայ, այլ քառասուն տարվայ ընթացքում:

19 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մայիսի 18-ին կրօնչառական մեծ նաւահանգստում կայացաւ Բարձրագոյն նաւահանգիստ արտասահմանից եկած 1-ին կարգի «Դուբ» էլիքընդունան» եւ «Վարնագ» եւ 2-դ կարգի «Ջիգիտ» կրէյսերները:

Ալիքսանդր-Նէվսկոյի զգաստութեան ընկերութիւնը ձեռնարկում է զգաստութեան առանձին տան կառուցման անտեղ զետեղելու համար զգաստացածներին ժողովի համար դռն-ընթեռն եւ ընթերցանութիւններ արեւելոյթեան փնտի մասին, թէյատուն, գրասենեակ, ամբուլատորիա, տպարան եւ ուրիշ հիմնարկութիւններ զգաստութեան քարոզ տարածելու նպատակով, այդ բոլոր ընդարձակ մտքով: Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայել բարեհաճեց տալ Պինսկ քաղաքի չքաւոր հըրկիդաններին օգնելու համար 10,000 ռուբլի: Արձակվում է, իր խնդիրքի համաձայն, պետական կօնսորի օգնական Իվանչէնկով վերոյիշեալ պաշտօնից:

Վիեննայի Պատգամաւորների ժողովը երկուշաբթի նիստում ընդունեց կառավարական առաջարկութեան վերջին պարագրաֆները ջրանցքներ անցկացնելու եւ գետերը կանոնաւորելու մասին՝ ամբողջ պատգամաւորների ժողովի բուն հաւանութիւններով:

ԿՕՐՈՒՆԻԱ. Բաղաձային տուրքերը հաւաքող հիմնարկութիւններում ծառայողները ապաստանվեցին եւ սկսեցին քարեր արձակել ժանդարմների վրա, որոնք աշխատում էին կարգը վերականգնել: Ժանդարմները գնդակներ էին արձակում եւ մի քանի մարդկանց սպանեցին եւ մի քանիսն իրաւորեցին: Ժանդարմները ցրվեցին ապստամբներին, որոնցից մէկը սպանվեց եւ տասը հոգի վիրաւորվեցին:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻՔ-ԱԶԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՇ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅԻՑ ՈՉ ՀԵՌՈՒ

Ղլախ գիւղում արվում է

ԳԵՂԵՅԻԿ ԱՄԱՐԱՆՈՑ

Երկրորդ յարկում, իր բոլոր յարմարութիւններով: Գիւղի օդը եւ ջուրը, բոխիկների վկայութեամբ, աւելի առողջարար են եւ զովարար, քան Ղարաբլիխայում:

Դիմել՝ Ս. Կիսկաթ, Կարակիշ, Տարիբեյ Ապինյան 1—1

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ռ. եւ 1 ռ. 50 կ.:



ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՄԱՐԻՍԻՆԻՆԻ
ՆՈՐ ՄԻՋՈՑ
Մաղերը բուժանելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թիֆը: Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒՇԱԲԸ
Երեսին քնքուր ինչ եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մոլերը, տալիս է կաշուին քնքուր ինչ եւ սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ արկղիկը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Մախվում են բոլոր պարֆումերական եւ զեղաւազանական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինական փողոցի մ. № 15, բնակարանի № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ կովկասեան զեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեսանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի զեղաներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պատուով:

12—100

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, մայիսի 20-ին,
Դիւստան Ն. ՅԱՎԷՍՏՆԻՍՅԱՆԸ,
Մասնակցութեամբ սիրողների, կը ներկայացնէ
„Ք Ի Ն“
Կամ. 5 դրոժ. հեղ. Ն. Դիւստի:
Տոմարները վաճառվում են կասսայում
Սկիզբն է երեկոյեան ճիշտ 8 ժամին:

2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նա վարձով է տալիս Բորժոմում կահաւորված երկարիանի ամառանոց նախկին Ե. Ս. Արէսթոմովի, այժմ Թիֆլիս քաղաքին պատկանող, 5 սենեակով ներքին յարկում եւ 4 սենեակով վերին յարկում, ամեն պատկանելիքներով: Պայմանները մասին հարցնել ֆաղաքային վարչութեան 4-րդ բաժանմունքում:

1—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին տարիների նման ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պետա-դօրսկում) մայիս ամսից:

5—10

Լ յ յ ա տ ե ս ա ն
ԲՈՒՎ. ԱՐԹՐՈՒՆՈՒ
„ԲԺՇԿԻ ԶՐՈՅՏՆԵՐԻ“ № 2
1) „Վ Ա Տ Յ Ա Ի“
8 ն կ ա ռ ո Վ
Գինն է 6 կոպ.
2) «ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ» Գինն է 75 կ.
Մախվում է Թիֆլիսի ու զուտների գրքավաճառանոցներում եւ հեղինակի մօտ: Պարսկաստանից դիմելու են Թաւրիզի ղոկաթ ֆալայեանին:
Մինչեւ սեպտեմբեր դիմել՝ Левону Мелик-Адамянъ, редакция «Муртъ».

3—10

ԼԵՌՆԱՅԻՆ ԻՆՏԵՆՏՐ Ա. Դ. ՄԻՒՍԼՈՒՆԻ ՆԻ ԸՆԿ.
Քուրայիսի Քաղաքային Զրանցքի Ընկերութեան Վարչութիւնը
սրանով յայտնում է ի դիտութիւն ընդհանուրի, որ վերոյիշեալ ընկերութիւնը սկսեց իր գործողութիւնները: Փայիքի ստորագրութիւնը շարունակվում է:
Ընկերութեան ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ գտնվում է Թիֆլիսում, Երեսանեան հրապարակի վրա, Խարազովայի տանը:
ԿԱԻԳԱԴՐԻԶ-ԳԻՐԵԿՏՕՐԻ գրասենեակը (Բուխայեան գրասենեակ) գտնվում է Բուխայեան:

1—1

Կիրակի, մայիսի 20-ին
«Մ Ո Ւ Շ Տ Ա Յ Ի Դ» Ա Յ Գ Ո Ւ Մ
Թիֆլիսի օրի եւ եժանագին ճաշարանի օգտին
տեղի կունենայ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ
Երաժշտութեամբ, երգիչների մասնակցութեամբ եւ ընծաներով (ձի, կով, էշ եւ ոչխար):
Զբօսանքի սկիզբն է ցերեկվայ 12 ժամին: Մուտքի գինը՝ 20 կոպէկ:

4—4

ՆԱՐԱՐԱԴԻՆԱՐԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի դիտութիւն պ. պ. բաժնետէրերի, որ երրորդ 10% վճարը, այսինքն իւրաքանչիւր փային 10 ռուբլի, նշանակված է տոյն մայիսի 11-ից մինչեւ 21-ը ներփակված:
Բաժնետէրերը վճարման ժամանակ պէտք է ներկայացնեն բաժնետոմսերը:
Նաեւ յիշեցնում է ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածը:
Ընկերութեան գրասենեակը՝ Երեսանեան հրապարակ, տուն Խարազեանի:
(1, 5, 10, 15, 14 եւ 20)

6—6

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
Գեղունի, չքեղ զեղարուեստական թերթ, Վենետիկ 1901 թ. գ. 1 ռ.
Մարադեան Տաճ. քաշ., Կանանց խնդրի առթիւ, Թիֆլիս, 1901 թ. գ. 40 կ.
Մեծատունեան Եղ., Կայր առաջնորդ, բարոյական-վարդապետական, չրջ. ա. Մօսկ. գ. 30 կ.
Արովեան Խաչատուր, Երկամիտութիւնների ժողովածու (Վերջ Հայաստանի եւ ուրիշները), հեղինակի պատկերով, Մօսկվա, գ. անկապմ. 1 ռ., կաշեկապմ. 1 ռ. 40 կ., փառակապմ. 1 ռ. 75 կ.
Ահարոնեան Ա., Պատկերներ, Մօսկվա, գ. 1 ռ.
Բուրդուղեան Ա. Բժ., ա. Ով է յանցաւորը—15 կ., Բ. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ—10 կ., Գ. Գեղձախտ—10 կ., Գ. Վենետիկեան ախտեր—5 կ., Ե. Մեր նկարները—10 կ., Գ. Միֆիլիս Բ. տիպ—1 կ. եւ է. Ինչ է անառակութիւնը—5 կ.
Պետերբուրգի հայ ուս., ա. Անճրեւ եւ ձիւն, նկարներով—10 կ., Բ. Տաքութիւն եւ օդ, նկարներով—12 կ., Մաղիկ եւ պտուղ—8 կ., Գ. Բոյսերի կեանքը, նկարներով—8 կ., Ե. Գիւղական փառաբանը—20 կ. եւ Գ. Կախարդը—15 կ.
Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю.

(Գ. ու. Կ.) 3—3

Р. КЕЛЕРЪ И К^о
ФАБРИЧНО-ТОРГОВОЕ ТОВАРИЩЕСТВО
ВЪ МОСКВѢ, ИЛЬИНКА, СРЕДНИЕ ТОРГ. РАДЫ.

ПРОВАНСКОЕ МАСЛО
ИЗВѢСТНОЕ КЕЛЕРСКОЕ, ПРИГОТОВЛЕННОЕ ВЪ НИЦЦѢ ПО ОСОБОМУ УКАЗАНІЮ. Масло это просеивается только изъ оливокъ-соборныхъ, ПРЯМО СЪ ДЕРЕВА, вполнѣ отбѣлхъ и отборныхъ оливокъ.

КЛЮКВЕННЫЙ экстрактъ
Фабрики Т-ва Р. КЕЛЕРЪ И К^о ДАЕТЪ ВПОЛНѢ ПРОЗРАЧНЫЙ ПРЕЛЕСТНАГО ЦВѢТА И ВКУСА НАПИТОКЪ.

ПЕРЕЦЪ ЧЕРНЫЙ И БѢЛЫЙ
молотый, въ жестяныхъ съ пробѣвующей крышкою, отъ 1/32 до 1/8 ф. а также въ изящныхъ граненыхъ флаконъ для стола. Подмеси къ молотому перцу—такое обычное явленіе и настолько перешли границы, что готовый молотый перецъ часто продается гораздо дешевле немолотого цѣльнаго. Ярлыкѣ же Т-ва Р. КЕЛЕРЪ И К^о какъ извѣстно всѣмъ, сплжнитъ ВѢРНЫМЪ РУЧАТЕЛЬСТВОМЪ ВЪ НЕПОДѢЛЬНОСТИ ТОВАРА.

КЕЛЕРСКАЯ ДУШИСТАЯ СТОЛОВАЯ ГОРЧИЦА
въ порошкѣ, вполнѣ готовая для МГНОВЕННАГО приготавленія изъ добрыхъ произведеній по тонкому вкусу, аромату и дешевизнѣ. Рекомендуются также и обыкновенная крышная сухая горчица для стола.

КЕЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭССЕНЦИЯ
Благодаря извѣстной добротѣ качества и несомнѣннымъ преимуществамъ ея предъ всѣми другими, събытъ ея, постепенно прогрессируя, достигъ въ истекшемъ году цифры БОЛЕЕ ЧѢМЪ 1 1/2 МИЛЛІОНА ФЛАКОНОВЪ. Дешевыя цѣны однако предлагаются и многими подражателями, но необходимо знать, что събытъ и естествознанию при этомъ возможность дешевленія товара, а лишь вынужденное стремленіе къ конкуренціи разбавленіемъ водой и меньшую рафинировку (точненіе кислоты) эссенціи.

СТОЛОВАЯ СОЛЬ
ХИМИЧЕСКИ ЧИСТАЯ, ВЫСШЕЙ РАФИНИРОВКИ, ФАБРИКИ Т-ва Р. КЕЛЕРЪ И К^о. Эта соль не гигроскопична и поэтому въ солоникѣ не осядетъ и не образуетъ комковъ.

ВЪ ПРОДАЖѢ ВЪСѢДЬ ВЪСѢХЪ БОЛЕЕ ИЗВѢСТНЫХЪ ТОРГОВЦЕВЪ.

ВЪ С. ПЕТЕРБУРГѢ, САРАТОВѢ, ВЛАДИВОСТОКѢ И НИЖЕГОРОДСКОЙ ЯРМАРКѢ.

ВЫСТАВА 1900. НАДМАСШТАБНОЕ ВЪСТАНОВЛЕНІЕ.

(Գ. 19, Գ. 20, 30)